ՀՏԴ 929:891.981.09 Արզումանյան + 800
Doi:10.54503/0135-0536-2024.3-258

ՍԵՎԱԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
(Ծննդյան 95-ամյակի առթիվ)*

Այս տարի Սևակ Արզումանյանը կդառնար 95 տարեկան և կարող էր լինել մեր շարքերում: Սակայն նա բավականին շուտ հեռացավ կյանքից, երբ դեռ չէր հասցրել նշել իր 75-ամյակը: Ինչպես էր երազում այդ տարեդարձը նշել Արցախում: Այն ժամանակ ես դեռ չէի տեսել Մեծ Հայքի հեքիաթային Արցախ նահանգը: Արզումանյանն ինձ պատմում էր Արցախի հինավուրց ու շքեղ վանքերի, բերդերի հեքիաթային ու անմոռաց բնության կախարդանքի մասին ու շարունակ շեշտում, թե ես հրավիրվածների թվում եմ լինելու: Ավա՜ղ... հետագայում ես չորս անգամ եղա Արցախ աշխարհում, հիացա այդ դրախտային երկրի և՛ բնությամբ, և՛ մարդկանցով, և՛ մշակութային հինավուրց հուշարձաններով:

Սևակ Արզումանյանը ծնվել է 1929-ի նոյեմբերի 22-ին՝ Արցախի Խաչեն գյուղում: Այդ գյուղում է ծնվել նաև եզակի մեծության գրականագետ, ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը, որի 100-ամյա հոբելյանը ևս լրանում է այս տարի: Նրանք մտերիմ ընկերներ էին, գաղափարակիցներ, Արցախ աշխարհի երևելի որդիներ:

Սևակ Արզումանյանին ճանաչում եմ շատ մոտիկից. 1978-ից մենք միասին աշխատում էինք Խ. Աբովյանի անվան ՀՊՄԻ-ի հայ գրականության ամբիոնում, և այդ համատեղ աշխատանքը հարատևեց մինչև նրա կյանքի ավարտը:

Բացառիկ եռանդի տեր էր, կարող էր աշխատել ողջ օրն ու չտրտնջալ, թե հոգնում է: Շատ կարդացող էր և նույնքան շատ գրող: Զմոռանանք, որ նրա գիտական ղեկավարությամբ Հայաստանի և Արցախի 22 գրականագետներ դարձել են բանասիրական գիտությունների թեկնածուներ, որոնցից մի երկուսը հետագայում պաշտպանեցին դոկտորական ատենախոսություններ:

Արզումանյանը 1951-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի ու գրականության բաժինը: 1952–1954 թթ. սովորել է նույն բուհի ասպիրանտուրայում ու հենց 1954-ին էլ պաշտպանել թեկնածուական ատենախոսություն «Հայ գրականությունը ռուսական առաջին հեղափոխության էտապում» թեմայով: Այդ ժամանակ նա ընդամենը 25 տարեկան էր: Երևանում ոչ ոք չուներ և ամեն ինչին հասնում էր ապավինելով սեփական ուժերին: Ուշագրավ է, որ ասպիրանտական այդ երկու

* Ներկայացվել է 17. VI. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:

տարիներին նա միաժամանակ դասախոսել է համալսարանում: Սա խոսում է նրա ունեցած հարուստ գիտելիքների մասին:

Գրականագիտությունը և գրական կյանքի խնդիրները նրան ուղեկցել են ողջ կյանքում:

1955–1962-ին աշխատել է «Սովետական գրականություն» ամսագրում՝ որպես տեսական-քննադատական բաժնի վարիչ: 1962-ից մինչև 1968-ը Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում եղել է ավագ գիտաշխատող: Նույն տարիներին համատեղությամբ եղել է «Հայաստան» հրատարակչության գեղարվեստական գրականության խմբագրության բաժնի վարիչը: 1968-ից տեղափոխվել է Գյումրի և դարձել Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի գրականության ամբիոնի վարիչը, իսկ 1972–1975-ին նաև՝ նույն ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի դեկանը: 1978-ից նա արդեն որպես պրոֆեսոր աշխատում էր Խ. Աբովյանի անվան ՀՊՄԻ-ում: XX դ. 90-ական թվականներին Հայաստանում բացվեցին մեծաքանակ մասնավոր համալսարաններ: Սևակ Արզումանյանը, որն ուներ Վիլյամ Սարոյան գրողի նկատմամբ մեծ սեր, ինքն էլ Երևանում բացեց իր համալսարանը՝ այն զարդարելով Վիլյամ Սարոյանի անունով:

Ժամանակակից գրականության հարցերը միշտ Սևակ Արզումանյան գրականագետի հետաքրքրությունների կիզակետում էին: Նա «Գրական թերթ»-ի մշտական հեղինակներից էր, որի էջերում երբեմն հանդես էր գալիս խիստ քննադատական հոդվածներով, որոնք մնում էին անպատասխան:

Նշանավոր գրականագետի առաջին մենագրությունը՝ նվիրված Վահան Թոթովենցին, լույս է տեսել 1961-ին: Այսինքն՝ Արզումանյանն առաջինն էր, որ մեծ սիրով գրեց 37-ի չարագուշակ բռնադատումների Գողգոթայի ժամանակ նահատակված, հետո արգելված, սակայն, ի վերջո, արդարացված գրողի մասին:

Նրա երկրորդ մենագրությունը ևս նվիրված էր բռնադատված ու արգելված գրողի՝ Զապել Եսայանին, որը լույս տեսավ 1965-ին:

1967-ին՝ 38 տարեկան հասակում, Արզումանյանը պաշտպանում է դոկտորական ատենախոսություն «Սովետահայ վեպը» թեմայով: Այդ նույն թվականին լույս տեսավ «Սովետահայ վեպը» հետազոտության առաջին հատորը, դրանից հետո լույս են տեսել նույն թեմատիկայի հետագա ընթացքը ներկայացնող ևս չորս հատորներ:

Այստեղ տեղին է ներկայացնել տաղանդավոր ու վաստակաշատ պատմավիպասան Հայկ Խաչատրյանի խոսքը Սևակ Արզումանյանի՝ խորհրդահայ պատմավեպի ողջ ընթացքը շարադրած գրականագետի եզակի տաղանդի մասին. «Սևակ Արզումանյանը հավանաբար միակ գրականագետն է, ով ընթերցել է հայերեն գրված բոլոր վեպերը, որոնց թիվն անցնում է հազարից և դարձել հայկական վեպի հետազոտող տեսաբան»[1]:

Խորհրդահայ վեպերի գրականագիտական ուսումնասիրմանն Արզումանյանը նվիրել է քառասուն տարի:

[1] *«Գրական թերթ» (Երևան), 07. V. 2014:*

Արզումանյանը ծանոթ էր համաշխարհային գրականության մեծերին՝ ռուսերեն ու հայերեն թարգմանություններով, իսկ նրա «Խորհրդահայ վեպը» հինգ ծանրակշիռ հատորներից բաղկացած կոթողային հետազոտությունը հիացմունք է պատճառում հատկապես հայկական վեպերի և ռուս դասականների գործերի դիպուկ համեմատություններով:

Դերենիկ Դեմիրճյան, Ստեփան Զորյան, Հրաչյա Քոչար, Գարեգին Սևունց, Սերո Խանզադյան, Բաղիշ Հովսեփյան, Խաչիկ Դաշտենց, Զորայր Խալափյան, Հրանտ Մաթևոսյան, Գուրգեն Մահարի, Մկրտիչ Սարգսյան, Պերճ Զեյթունցյան, Նորայր Ադալյան, Վահագն Գրիգորյան և տարբեր սերնդի հայ վիպասաններ իրենց բազմաթիվ վեպերով յուրօրինակ ձևով ստացել են իրենց արժանի գնահատականը:

Արզումանյանն առաջիններից էր, որ բարձր գնահատեց Խաչիկ Դաշտենցի «Խոզեղան» վեպը՝ այն համարելով «արևմտահայ հատվածի կյանքն ու ճակատագիրը պատկերող ամենից հաջողված ստեղծագործություն»[2]:

Ահա թե որքան ճշգրիտ է բնութագրված Վախթանգ Անանյանը որպես գրող. ««Հովագաճորի գերիները» վեպում Վ. Անանյանը կրկին հանդես է գալիս իբրև բնության «մեծ գրքին» քաջատեղյակ արվեստագետ, մարդու և բնության կապերը ներդաշնակող, այդ կապերի անխոնջ հետախույզ»[3]:

Ահա մեկ ուրիշ գնահատական տրված 1950-ականներին այնքան շատ ընթերցվող «Թեհրան» վեպին. ««Թեհրանը» ժանրային բնույթով քաղաքական-սոցիալական վեպ է, և ավելի իրավացի են նրանք, ովքեր այս ստեղծագործությունը գնահատեցին որպես լուրջ նվաճում՝ ոչ միայն Գ. Սևունցի, այլև սովետահայ արձակի մեջ»[4]:

Տարբեր առիթներով անդրադառնալով Հրանտ Մաթևոսյանի արձակին՝ Արզումանյանը եզրահանգում է. «Հր. Մաթևոսյանը բնավորությունների գեղագետ է, և նրա վեպերը բնավորությունների վեպերն են: Գրողի ուժը սրա մեջ է»[5]:

1977-ին լույս է տեսել Պերճ Զեյթունցյանի «Արշակ Երկրորդ» վեպը, որը Արզումանյանի կարծիքով գեղարվեստական լուրջ ձեռքբերում էր, պատմագեղարվեստական և ժամանակակից հոգեբանական վեպերի ժանրային սկզբունքների ներհյուսման հետաքրքիր փորձ:

Սևակ Արզումանյանը 1958-ից Հայաստանի գրողների միության անդամ էր ու եռանդուն անդամ: «Խորհրդահայ վեպը» ուսումնասիրության համար նա ստացել է Հայաստանի գրողների միության Միքայել Նալբանդյանի անվան մրցանակ (1995 թ.):

Հիանալի գիրք է Արզումանյանի «Հումորի ասպետը»՝ նվիրված դրամատուրգ, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՍՍՀ պետական և այլ մրցանակների դափնեկիր Ժորա (Գևորգ) Հարությունյանին: Ժորա Հարությունյանի երգիծանքը վերժամանակյա է և մեծագույն հաճույք է պատճառում

---

[2] Ս. Արզումանյան. Սովետատահայ վեպը, Երևան, 1980, էջ 195:
[3] Նույն տեղում, էջ 239:
[4] Նույն տեղում, էջ 235:
[5] Ս. Արզումանյան. Խորհրդահայ վեպը, գիրք IV, Երևան, 1990, էջ 325:

մարդուն: Նրա սցենարով գրված «Ոսկե ցլիկը», «Շրթներկ № 4» և, հատկապես, «Հարսնացու հյուսիսից» ֆիլմերը չհնացող արվեստի ստեղծագործություններ են, և հենց այդ մասին է վավերագրում Սևակ Արզումանյանը:

Ծնված ուսանողական տարիներից սկսած Արզումանյանն աշխատում էր և ապրում Երևանում, հետո՝ Գյումրիում, բայցևայնպես նա չէր կտրել կապը հայրենի Արցախի և իրենց գյուղի հետ: Այդ կապվածության առհավատչյան դարձավ «Ցամաքող աղբյուրներ» ինքնակենսագրական վիպակը, որը նա սիրով բաժանում էր մտերիմներին՝ իր արմատներին ծանոթացնելու ջերմ մղումով: Այդ վիպակի մասին առկա է հեղինակի հետևյալ խոստովանությունը. «Այս պատմությունը մեր գյուղի ու գյուղացիների մասին է: Նրանք շատ գեղեցիկ գրքի են արժանի, ես սա կարողացա գրել»[6]:

1997-ին լույս է տեսնում «Վահրամ Հաճյան» մենագրությունը:

Արզումանյանի ծավալուն գրքերից մեկը կոչվում է «Բանաստեղծության ազգային հողը» (1998 թ.), որը, իրավամբ, կոթողային աշխատություն է:

2000 թ. դարձավ գրականագետի աստեղային ժամը. նա ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Դա ստեղծագործական նոր լիցք հաղորդեց Արզումանյանի ստեղծագործական կյանքին, ու նա գրեց «Ստեփան Ալաջաջյան» (2008 թ.), մենագրությունը, որը լույս տեսավ հետմահու:

Ս. Արզումանյանը բազմաթիվ հոդվածների հեղինակ է: 1979-ին Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հրատարակած «Հայ նոր գրականության պատմություն» 5-րդ հատորի «Զապել Եսայան» հատվածը նա է գրել:

Արզումանյանը շատ հոգատար հայր էր իր զավակների համար: Նրա մեծ վիշտը կապված էր իր ավագ որդու՝ հեռուստալրագրող, Արցախյան առաջին հերոսամարտի դրվագներ լուսաբանող Արտակ Արզումանյանի հետ:

Սևակ Արզումանյանի դուստրը՝ Լիլիթ Արզումանյանը, բանասիրական գիտությունների դոկտոր է: Նա երկար տարիներ Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահն էր, այնուհետև՝ Կինոյի ու թատրոնի ինստիտուտի ռեկտորը: Նա սկզբունքային ու եռանդուն արվեստագետ է և այժմ աշխատում է Արվեստի ինստիտուտում:

Որդին՝ Հարությունն Արզումանյանը, տաղանդավոր դիրիժոր է, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր, ով իր վարպետությունը կատարելագործել է Ֆրանսիայում ու Գերմանիայում: 2000 թվականից Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի դիրիժորն է: Նրա ղեկավարությամբ օպերայի և բալետի թատրոնի նվագախումբը հանդես է եկել այնպիսի նշանավոր օպերաների նվագակցությամբ, ինչպիսիք են՝ «Ամիդա», «Դավիթ Բեկ», «Ալմաստ», «Արշակ Երկրորդ», «Դոն Ժուան» և այլն: Նա արտասահմանում արժանացել է միջազգային մի շարք մրցանակների:

Սևակ Արզումանյանը կյանքից հեռացավ 2004-ին:

[6] *Ս. Արզումանյան. Ցամաքող արցունքներ, Երևան, 1997, էջ 155:*

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի բանասիրական ֆակուլտետի լսարաններից մեկը կրում է Սևակ Արզումանյանի անունը, և լսարանի պատին փակցված է գրականագետի գեղեցիկ ու մեծ դիմանկարը:

Սևակ Արզումանյանի գրականագիտական ժառանգությունն այն կարևոր փաստն է, ըստ որի ազգային արժեքներ ստեղծող մարդիկ մշտապես ուղեկցում են հայրենակիցներին՝ իրենց մեծարժեք գործերով:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից հայ գրականություն, գրականության դասավանդման մեթոդիկա, գրաքննադատություն, հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 36 գրքի և շուրջ 760 հոդվածի: ORCID:0000-0001-9526-9464. aelita.dolukhanyan@gmail.com